

ՄԱՍ 2. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ
ժողովրդագրություն, կենսամակարդակ, ծախսեր և եկամուտներ

1. Ընդհանուր տեղեկատվություն հետազոտության մասին

1.1 ՀՀ վիճվարչությունը Համաշխարհային բանկի ֆինանսական և տեխնիկական աջակցությամբ 1996թ. նոյեմբեր-դեկտեմբերին անցկացրեց լայնածավալ հետազոտություն ՀՀ ողջ տարածքում՝ տնային տնտեսությունների ընտանեկան, ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական և հատկապես ֆինանսական վիճակն ուսումնասիրելու (վիճակագրելու) նպատակով:

Հետազոտությամբ ընդգրկվել էին 5040 տնային տնտեսություններ, որոնք ընտրվել էին պատահական ընտրանքի մեթոդաբանական սկզբունքների կիրառմամբ: Հետազոտության մեջ ընդգրկված տնային տնտեսությունների բաշխումն ըստ հանրապետության մարզերի, քաղաքների և գյուղերի բերվում է ստորև.

Աղյուսակ 5. Ընտրանքով ընդգրկված տնային տնտեսությունների բաշխումն ըստ ՀՀ վարչա-տարածքային միավորների

ՍԱՐՁԵՐ	Գյուղերի քանակը	տ/տ քանակը	Քաղաքների քանակը	տ/տ քանակը
ԱՐԱԳԱԾՈՏՆ	8	160	2	80
ԱՐԱՐԱՏ	17	340	2	81
ԱՐՄԱՎԻՐ	17	340	3	152
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	14	280	3	120
ԼՈՌԻ	10	200	4	297
ԿՈՏԱՅՔ	9	180	3	185
ՇԻՐԱԿ	11	200	2	353
ՍՅՈՒՆԻՔ	3	60	3	147
ՎԱՅՈՑ ՉՈՐ	4	80	1	40
ՏԱՎՈՒՇ	7	140	4	160
ԵՐԵՎԱՆ			1	1445
ԸՆԴԱՄԵՆԸ	100	1980	28	3060

1.2 Հետազոտության արդյունքում ստացվեց 4920 լրացված հարցաթերթիկ, այսինքն՝ 120 ընտանիքներ (ընդհանուրի 2,4%-ը) հրաժարվել էին այն լրացնել:

Հարցաթերթիկներին պատասխանած տնային տնտեսությունների մոտ մեկ քառորդը՝ 1260-ը, մեկ ամսվա ընթացքում լրացրել է նաև “Տնային տնտեսության եկամուտների և ծախսերի օրագիր”:

Հարցազրույցավարների հաշվետվությունների հիման վրա կատարվել է ընտանիքների հասցեների 908 փոխարինում (ընտրանքի 18%): Պահեստային հասցեների օգտագործման պատճառները հետևյալներն էին.

- 583 դեպքում (փոխարինումների 64,2%), չնայած բազմաթիվ այցելություններին, ընտանիքի հետ հանդիպումը չի կայացել՝ բնակարանները փակ լինելու պատճառով, ըստ որում դրանցից.

- * 237 դեպքում բնակիչները գտնվում էին այլ բնակավայրում, սակայն Հայաստանի տարածքում,
- * 292 դեպքում` ՀՀ սահմաններից դուրս,
- * 54 դեպքում բնակիչների բացակայության պատճառն անհայտ է մնացել,
- 325 դեպքում (փոխարինումների 35,8%), հասցեն կամ հասցեատերը ճշգրիտ չէին, ընդ որում`
 - * 76 դեպքում բնակարանը բնակեցված չէր,
 - * 73 դեպքում բնակարանը լքված էր,
 - * 132 դեպքում նման հասցե չի գտնվել,
 - * 28 դեպքում բնակարանը քանդված էր և բնակության համար ոչ պիտանի,
 - * 9 դեպքում տարվելիս են եղել շինարարական աշխատանքներ,
 - * 5 դեպքում նշված հասցեն պատկանելիս է եղել հիմնարկ-ձեռնարկության,
 - * 2 դեպքում հիմնական կացարան չի եղել:

1.3 Ստացված տվյալների օգտագործումն ու տարածումը հիմնական համակցության վրա, այնուհանդերձ, հնարավորություն էր ընձեռում գրանցել հետևյալ վիճակագրական արդյունքները.

Հայաստանի տարածքում 01.01.96 թվականի դրությամբ գրանցված 17 ընտանիքից մեկը նույն թվականի նոյեմբեր-դեկտեմբերին գտնվում էր հանրապետությունից դուրս: Ընդհանուր առմամբ 50 հազարից ավելի ընտանիքներ ամբողջ կազմով, գրանցումից դուրս չգալով և պահպանելով իրենց բնակարանները, հետազոտման պահին գտնվել են այլ երկրներում, այսինքն` բնակչության մոտ 5,9%-ը (ավելի քան 200 հազար մարդ) թերևս ժամանակավոր էմիգրանտներ են հանդիսացել:

2. Տնային տնտեսությունների ժողովրդագրական բնութագիրը

2.1. Ինչպես արդեն վերը նշվեց, հետազոտությունն ընդգրկել է 4920 տնային տնտեսություններ (20088 մարդ), կամ ՀՀ տնային տնտեսությունների (ընտանիքների) 0,56%-ը (բնակչության՝ 0,60%):

Կառուցվածքն ըստ անդամների թվի ներկայացված է աղյուսակ 6 -ում:

Աղյուսակ 6. Տնային տնտեսությունների բաշխումն ըստ անդամների թվաքանակի, %

Անդամների քանակը	Քաղաք	Գյուղ	Ամբողջ հանրապետություն
1	10.28	15.59	12.34
2	11.94	12.39	12.11
3	12.54	11.44	12.11
4	24.01	20.05	22.48
5	19.73	20.89	20.18
6	10.78	10.45	10.65
7	5.11	5.46	5.24
8 և ավել	5.61	3.73	4.88
Ընդամենը	100.00	100.00	100.00
Անդամների միջին քանակը	4.18	3.93	4.08

2.2. Հանրապետությունում մեկ անդամ ունեցող ընտանիքները բավական տարածված են. ըստ անդամների թվի տնային տնտեսությունների դասակարգման մեջ 4 և 5 անդամ ունեցող տնային տնտեսություններից հետո դրանք երրորդ հորիզոնականում են (22,5%, 20,2% և 12,3%): Մեկ անդամից բաղկացած տնային տնտեսությունների 64,1% գոյացնում են 60 և ավելի տարիք ունեցողները: Ընդ որում գյուղերում միայնակ տարեցները համեմատաբար քիչ են և կազմում են այդ կարգի ընտանիքների 59,3%-ը (քաղաքներում՝ 68,7%):

Բազմանդամ (7 և ավելի անդամ) տնային տնտեսություններն իրոք ավելի տարածված են քաղաքներում: Դրանց բաժինն ընտանիքների ընդհանուր թվում հասնում է 10,7%-ի (գյուղերում՝ 9,2%):

Հանրապետությունում վիճակագրական միջին ընտանիքն ունի 1,34 անչափահաս երեխա, ըստ որում քաղաքաբնակ ընտանիքը՝ 1,33, գյուղաբնակը՝ 1,35:

Գյուղական ընտանիքներին բնորոշ բազմազավակությունը նույնպես ընդգծված չէ հանրապետությունում: Չորս և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքները կազմում են քաղաքաբնակ ընտանիքների 4,18%, իսկ գյուղաբնակների՝ 4,99%:

Ընտանիքների անդամների 3,4%-ը հետազոտմանը նախորդող մեկ ամիս (և ավելի) ժամանակաշրջանում բացակայում էին հանրապետությունից: Եթե փորձենք գնահատել ՀՀ բնակչության միգրացիան, ապա ՀՀ տարածքում 01.01.96թ. դրությամբ գրանցված ընտանիքներից հետազոտման պահին բացակայել են 113-114 հազար ընտանիքի անդամ: Եթե հաշվի առնենք նաև ընտանիքների միգրացիան, ապա կարելի է եզրակացնել, որ 1996-ի նոյեմբեր-դեկտեմբերին հանրապետության սահմաններից դուրս են գտնվել (մեկ ամիս և ավել ժամանակով) հանրապետությունում գրանցված բնակիչների մոտ 9,5%, կամ ավելի քան 320 հազար մարդ:

Ներդիր 2. Հայաստանի Հանրապետության բնակչության արտաքին միգրացիան 1980-1997թթ.

1980 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետության բնակչության միգրացիոն սալդոն բացասական բնույթ է կրում: Բացառություն են կազմել 1989-1991թթ., երբ միգրացիայի բացասական սալդոն փոխարինվեց դրականի՝ պայմանավորված տարածաշրջանում հարաբերությունների սրման պատճառով դեպի Հայաստան փախստականների և բռնի տեղահանվածների հսկայական հոսքով:

1980-1987թթ. հանրապետության բնակչության միգրացիոն հոսքերն ըստ պաշտոնական տվյալների բնութագրվում են հետևյալ կերպ .

Տարիները	Եկողներ	Մեկնողներ	Միգրացիոն սալդո (+,-)
1980	38,6	47,0	-8,4
1982	39,7	47,3	-7,6
1984	45,3	56,3	-11,0
1986	54,9	66,6	-11,7
1987	60,3	70,7	-10,4

Հարկ է նշել, որ ՀՀ վիճվարչության կողմից տարվող բնակչության միգրացիայի հաշվառումը, որը կատարվում է ներքին գործերի մարմինների կողմից բնակչության գրանցման և դուրս գրման տվյալների հիման վրա, չի արտացոլում միգրացիոն գործընթացների իրական չափերը: Վերջին տարիներին անձնագրային ռեժիմի թուլացման, ինչպես նաև սահմանային անցման կետերում միգրանտների հաշվառման համակարգի բացակայության պայմաններում, նրանց զգալի մասը դուրս է մնում վիճակագրության տեսադաշտից:

Միգրացիայի իրական չափերը գնահատելու նպատակով ուսումնասիրվել են վերջին տարիներին Հայաստանն արտաքին աշխարհի հետ կապող գրեթե միակ՝ օդային ուղիներով տեղի ունեցած ուղևորափոխադրումները: Վերջիններս, ըստ ՀՀ ավիացիայի գլխավոր վարչության տվյալների, 1992-1997թթ. համար բնութագրվում են հետևյալ կերպ.

Տարիները	Ժամանել են	Մեկնել են	Միգրացիոն սալդո (+,-)
1992	636,9	865,5	-228,6
1993	702,4	832,5	-130,1
1994	748,8	599,6	-120,7
1995	469,5	507,0	-37,5
1996	496,9	514,0	-23,6
1997	465,7	504,1	-38,4

Ինչպես երևում է աղյուսակից, նախորդ վեց տարիների ընթացքում հանրապետությունից մեկնածների թիվը գերազանցում է եկողների թիվը 578,9 հազար մարդով, ընդ որում ամենամեծ արտահոսքը գրանցվել է 1992-1994 թթ.՝ 479 հազար մարդ:

Սկսած 1995 թվականից հանրապետությունում նկատվում է միգրացիոն գործընթացների որոշակի կայունացում: Ուղևորափոխադրումների ծավալների ուսումնասիրություններն ըստ ամիսների ցույց են տալիս, որ չորրորդ եռամսյակներում հանրապետություն եկողների թիվը գերազանցում է մեկնողների թվին, որը թույլ է տալիս ենթադրել, որ միգրանտների մի մասը ոչ թե անվերադարձ է հեռացել հանրապետությունից, այլ մեկնել է արտագնա աշխատանքի: Այդ մասին են վկայում նաև 1995թ. նոյեմբերին հանրապետության երկու օդանավակայաններում /Երևանի «Զվարթնոց» և Գյումրիի/ 1000 ուղևորների հարցման միջոցով անցկացրած հետազոտության արդյունքները, ըստ որի մեկնողների ճնշող մեծամասնությունը՝ 82,4%-ը, մտադիր է վերադառնալ Հայաստան և միայն 5,3%-ն է նշել, որ ընդմիջտ են հեռանում: Նշված հետազոտության տվյալների համաձայն մեկնողների 58,4%-ը տղամարդիկ են, 75,2%-ը՝ քաղաքային բնակավայրերի բնակիչներ, 77,5%-ը ամուսնացած են: Հետազոտությանը պարզվել է, որ մեկնողների 35,3%-ն ունեն բարձրագույն կրթություն, մինչդեռ 1989թ. մարդահամարի տվյալներով բնակչության այդ կատեգորիան կազմել է 16,2%: Հարցվողների ճնշող մեծամասնությունը՝ 84,2%-ը, մեկնում էին Ռուսաստանի Դաշնություն, 8,8%-ը Ուկրաինա և 1,9%-ը Լեհոստան:

Ներդիրի որոշ տվյալներ հաստատվել են նաև տնային տնտեսությունների հետազոտության արդյունքներով: Հետազոտության արդյունքներով ընտանիքի բացակայող անդամների հիմնական մասը՝ բոլոր բացակայողների 69%-ը, 18-39 տարեկան է: Առանձին տարիքային խմբերի կտրվածքով վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրապետությունում գտնված 18-29 տարեկանների խմբում բացակայել են գրեթե 10%: Հանրապետությունից դուրս գտնվելիս է եղել բազմանդամ ընտանիքների անդամների գրեթե 5%-ը:

3. Տնային տնտեսության անդամների տնտեսական կարգավիճակը

3.1 Ուսումնասիրված տնային տնտեսությունների անդամների 22.35%-ը սովորողներ են եղել (ներառյալ նախադպրոցական հաստատությունների երեխաները և երկրորդ (երրորդ) մասնագիտություն ստացող մեծահասակ տարիքի անդամները):

3.2 Անդամների 14.42%-ը զբաղված է եղել տնտեսության տարբեր ոլորտներում, ընդ որում նրանց 0.2%-ը 14-17 տարեկան անչափահասներ են:

3.3 Ինքնազբաղվածները կազմել են տնային տնտեսությունների առկա անդամների 9.19%: Այս խմբում դեռահասների բաժինն արդեն 1.4% է եղել:

3.4 Գործատուներն, իբրև սոցիալ-տնտեսական խավ, նշանակալից չեն եղել. նրանք կազմել են ընդհանուր համակցության 0.3%-ը: 18 և ավելի տարեկանների տարիքային խմբում գործատուների բաժինն անհամեմատ մեծ է եղել՝ 4.5%:

3.5 Իրենց գործազուրկ են համարել հետազոտությունների գրեթե 14%-ը: Հետաքրքրական է, որ այդ խմբում են իրենց համարել 14-17 տարեկանները՝ իրենց գործազուրկ հայտարարածների 3.3%-ը: Վերջիններս, չհավակնելով պաշտոնապես գործազուրկի կարգավիճակ ստանալուն (համաձայն ՀՀ զբաղվածության մասին օրենքի), այնուամենայնիվ նշել են, որ ակտիվորեն աշխատանք են փնտրում:

3.6 Այսպիսով, տնտեսապես ակտիվ բնակչությունը (զբաղվածները, ինքնազբաղվածները, գործատուներն ու գործազուրկները) կազմում են հետազոտված համակցության (բնակչության) մոտ 38%, որը մոտ է 1996թ. համար աշխատանքի վիճակագրության հաշվարկային տվյալներին:

3.7 Հետազոտությամբ ընդգրկվածներից յուրաքանչյուր 6-7-րդը կենսաթոշակառու է (14.61%): Ըստ հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի տվյալների առ 01.01.97 թ. (հիշեցնենք, որ հետազոտության մեջ հարցման բուն գործընթացը կատարվել է 1996-ի նոյեմբեր-դեկտեմբերին) ՀՀ յուրաքանչյուր 6-րդ բնակիչ եղել է կենսաթոշակառու, այսինքն հաշվառման և հետազոտության տվյալները նույնական են, ուստի և հավաստի:

Ներդրի 3. Տեղեկատվություն Հայաստանի կենսաթոշակառուների մասին:

Ըստ հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի տվյալների, 1995-1997թթ. կենսաթոշակառուների թվաքանակը և պետական միջոցներից նրանց կատարած կենսաթոշակային վճարումները բնութագրվում են հետևյալ թվերով.

առ 1- ը հունվարի

	1995	1996	1997
Կենսաթոշակառուների ընդհանուր թիվը /մարդ/	636073	641852	607111
այդ թվում՝ տարիքային թոշակառուները	455665	458989	435509
Կենսաթոշակառուների համար սահմանված տարեկան ընդհանուր գումարը /դրամ/	11113.1	18167.1	22962.3
այդ թվում՝ տարիքային թոշակառուներին	7701.4	12709.6	16535.2
Տարիքային թոշակառուների միջին ամսական թոշակը /դրամ/	1409	2308	3164

Հանրապետության տարածքային կտրվածքով կենսաթոշակառուների բաշխվածության վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանց բաժինը բնակչության ընդհանուր թվաքանակում միջին հանրապետականի (16%) համեմատ ավելի բարձր է Տավուշի (19.7%), Սյունիքի (18.9%) և Շիրակի (17.1%) մարզերում: Այդ ցուցանիշը միջինից շոշափելիորեն ցածր է Գեղարքունիքի (12.1%) և Կոտայքի (13.1%) մարզերում:

Վերոհիշյալ տվյալներից հետևում է, որ 1997թ. հունվարի 1-ի դրությամբ յուրաքանչյուր հինգերորդ բնակիչ գտնվել է պետական սոցիալական հովանավորության ներքո /այսինքն ստացել է տարբեր տեսակի թոշակ կամ նպաստ/, յուրաքանչյուր վեցերորդ բնակիչ կենսաթոշակառու է եղել, իսկ յուրաքանչյուր իններորդը՝ տարիքային թոշակառու:

Ժողովրդագրական վիճակագրությունը փաստում է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մեծահասակների հարաբերական ավելացում: Այսպես՝ 60 և ավելի տարիք ունեցողների տեսակարար կշիռն այսօր կազմում է ընդհանուրի մոտ 12%, այն դեպքում, երբ 60-ական թվականներին այն չէր գերազանցում 7-8 %-ը, իսկ 70- ական թվականներին մոտենում էր 9 %-ի սահմանագծին:

3.8 Ընտանիքների մնացած անդամները՝ 25.49% համալրում են տնային տնտեսուհիների, ժամանակավորապես չաշխատողների, զինծառայողների, կրթօջախներ չհաճախող երեխաների և այլ տնտեսական խմբերի շարքերը:

3.9 Ընտանիքների անդամների բաշխումն ըստ տարիքի և տնտեսական կարգավիճակի ներկայացված է աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7. Ընտանիքի անդամների բաշխումն ըստ տնտեսական կարգավիճակի

Տարիքային խմբեր	Ընտանիքի անդամների թիվը, մարդ	Դրանցից բացակա են ՀՀ-ից, %	Հաճախում են ուս. հաստեղ, %	Զբաղված են (վարձու աշխատող են), %	Ինքնազբաղված են, ներառյալ գ/տ մեջ, %	Գործատու են, %	Թոշակառու են, %	Գործազուրկ են, %	Այլ %
0-6 տար.	2255	1.51	2.66	0.00	0.00	0.00	0.00	0.00	95.83
7-13տար.	2860	1.33	96.50	0.00	0.00	0.00	0.00	0.00	2.17
14-16 տար.	1159	1.04	92.49	0.26	0.43	0.00	0.00	1.81	3.97
17 տար.	308	3.90	50.32	1.30	6.82	0.00	0.00	23.38	14.29
18-29 տար.	3379	9.68	12.64	15.48	12.41	0.2	0.06	27.70	21.84
30-39 տար.	3405	4.20	0.12	27.14	18.72	0.6	0.09	26.84	22.29
40-49 տար.	2431	2.67	0.25	37.93	16.07	0.3	0.40	24.31	17.07
50-59 տար.	1458	2.19	0.21	26.27	12.9	0.2	30.25	16.87	11.11
60 և ավել	2833	0.64	0.11	4.87	5.08	0.14	86.62	0.74	1.80
Ընդամենը	20088	3.39	22.35	14.42	8.90	0.3	14.61	13.94	22.09

Ներդիր 4. Տնտեսության մասնավոր հատվածը:

Տնային տնտեսությունների վերոհիշյալ ուսումնասիրությունը հնարավորություն տվեց տեղեկություն ստանալ նաև հանրապետության մասնավոր հատվածի ձևավորման ընթացքի մասին:

Հետազոտված համախմբության մեջ վարձու աշխատողների ընդհանուր թվաքանակի 14.7%-ը (415 մարդ) զբաղված էին մասնավոր հատվածում: Նրանց ամսական միջին աշխատավարձը կազմում էր 20.2 հազ. դրամ, ինչը 1.9 անգամ գերազանցում էր պետական հատվածում վարձու աշխատողների միջին աշխատավարձը:

Ինքնազբաղված են եղել 575 մարդ (բացառությամբ գյուղատնտեսության մեջ զբաղվածների), որոնց մեծ մասը (64.3%-ը) գործել է առևտրի և հասարակական սննդի ոլորտներում: Ինքնազբաղվածների 8.3%-ը աշխատում էին քնակարանային-կոմունալ տնտեսության և կենցաղային սպասարկման ոլորտում, 7.5%-ը՝ տրանսպորտում, 6.1%-ը՝ շինարարությունում, 5.9%-ը՝ արդյունաբերության, 2.4%-ը՝ կրթության և 1.6%-ը՝ առողջապահության ոլորտներում:

Տեղական իշխանությունների կողմից գրանցված է եղել ինքնազբաղվածների միայն 25.3%-ի գործունեությունը:

Ըստ հետազոտության տվյալների սեփական գործ ունեցողների միայն 7.8%-ն էր գործատու, այսինքն ուներ վարձու աշխատողներ:

Ինքնազբաղվածների գուտ եկամուտներն էապես բարձր էին, քան վարձու աշխատողներինը: Ինքնազբաղվածի միջին ամսական եկամուտը կազմում էր 24.3 հազ. դրամ, ինչը 20.3%-ով գերազանցում էր մասնավոր հատվածում և 2.5 անգամ պետական հատվածում վարձու աշխատողների միջին ամսական աշխատավարձը:

Ձեռնարկատերերի միջին ամսական եկամուտը (55.7 հազ. դրամ) գերազանցում էր ինքնազբաղվածներինը՝ 2.3 անգամ և մասնավոր հատվածում վարձու աշխատողներինը՝ 2.8 անգամ:

4. Տնային տնտեսությունների եկամուտները

Աշխարհի բոլոր երկրներում էլ առկա է բնակչության կողմից եկամուտները թաքցնելու միտում, ինչը նվազեցնում է եկամուտների վիճակագրության արժանահավատությունը: Այդուհանդերձ, եկամուտների վերաբերյալ հետազոտությամբ ստացված տվյալների վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել ինչպես որոշակի համամասնություններ և հիմնական միտումներ, այնպես էլ իրականությանը մոտ ճշտությամբ գնահատել ընտանիքների կողմից հայտարարված եկամուտների ծավալները և դրանց աղբյուրները:

4.1 Ընթացիկ (հիմնական և լրացուցիչ) եկամուտների բաշխվածությունն ըստ եկամտի տեսակների մեկ տնային տնտեսության և մեկ շնչի հաշվով ներկայացված է աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8. Տնային տնտեսությունների ընթացիկ եկամուտներն ըստ աղբյուրների

	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Մեկ տնային տնտեսության հաշվով		Մեկ շնչի հաշվով	
		Դրամ	%	Դրամ	%
1.	Հիմնական եկամուտ	23069	593.99	6564	548.67
1.1.	Եկամուտ զբաղվածությունից	5103	131.38	1316	109.96
1.1.1.	Աշխատավարձ	4881	125.68	1255	104.91
1.1.2.	Այլ կանխիկ վճարներ	110	2.84	30	2.48
1.1.3.	Օգնություն՝ ապրանքների և ծառայությունների ձևով	72	1.86	19	1.62
1.1.4.	Աշխատավարձ՝ բնամթերքի ձևով	39	1.00	11	0.95
1.2.	Եկամուտ ինքնազբաղվածությունից	5142	132.40	1471	122.97
1.3.	Գյուղատնտ. ապրանքների արտադրությունից և իրացումից	11735	302.16	3358	280.65
1.4.	Եկամուտ սեփականությունից	1089	28.05	420	35.09
1.4.1.	Վարձավճար սեփականությունից	851	21.92	356	29.74
1.4.2.	Տոկոսավճարներ և դիվիդենդներ	238	6.13	64	5.36
2.	Լրացուցիչ եկամուտ	15768	406.01	5400	451.33
2.1.	Պետական նպաստներ	2381	61.32	798	66.67
2.1.1.	Կենսաթոշակ	1701	43.80	644	53.80
2.1.2.	Հաշմանդամության թոշակ	86	2.21	25	2.06
2.1.3.	Երեխայի նպաստ	396	10.19	77	6.45
2.1.4.	Նպաստ միայնակ մայրերին	28	0.72	7	0.61
2.1.5.	Գործազրկության նպաստ	77	1.98	19	1.62
2.1.6.	Կրթաթոշակ	56	1.45	14	1.13
2.1.7.	Այլ	38	0.97	12	0.99
2.2.	Տրանսֆերտներ	13386	344.69	4602	384.66
2.2.1.	Օգնություն բարեկամներից (հայաստանաբնակ)	2961	76.25	994	83.11
2.2.2.	Օգնություն բարեկամներից (ՀՀ-ից դուրս)	5123	131.91	1830	152.93
2.2.3.	Ալիմենտ	40	1.02	11	0.94
2.2.4.	Բարեգործություն	122	3.15	37	3.09
2.2.5.	Օգնություն (ապրանքների տեսքով...)	3622	93.27	1316	110.03
2.2.6.	Այլ եկամուտներ	1518	39.08	413	34.55
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	38836	1000.00	11964	1000.00

4.2 Ինչպես հետևում է վերը բերված տվյալներից, միջին վիճակագրական տնային տնտեսության եկամուտների մեծ մասը՝ 59.4%, կազմում են հիմնական եկամուտները, որոնց մեջ էլ ամենաձանրակշիռը գյուղատնտեսական ապրանքների արտադրությունից և իրացումից (30.2%), ինքնագրավածությունից (13.2%) և զբաղվածությունից (13.1%) ստացված եկամուտներն են:

Լրացուցիչ եկամուտներում (ողջ եկամուտների 40.6%) պետական սոցիալական տրանսֆերտների (կենսաթոշակներ, նպաստներ) կշիռը կազմում է 6.1%, այն դեպքում, երբ բարեկամներից և բարեգործությունից տրանսֆերտներինը՝ 34.5%: Կարելի է եզրակացնել, որ հայ ընտանիքների գոյատևման գրավականը գլխավորապես ընտանեկան (բարեկամական) ուժեղ կապերի առկայությունն է, իսկ պետության դերը դեռևս բավարար չէ: Փաստորեն միջին հայ ընտանիքի եկամուտների առաջացման աղբյուրների դասակարգումն ըստ կարևորության հետևյալն է. «սեփական աշխատանք» (59.4%) - «ուժեղ ընտանիք» (34.5%) «պետական հովանավորություն» (6.1%):

Սեփականությունից (մասնավոր) եկամուտներն ընտանեկան բյուջեի մուտքերի կառուցվածքում դեռևս շոշափելի չեն և հասնում են մոտ 3%-ի: Ընդ որում տոկոսավճարների և դիվիդենդների տեսքով ստացված եկամուտների տեսակարար կշիռը կազմել է ընդամենը 0.6%, ևս մեկ անգամ վկայելով կապիտալի շուկայի սաղմնային վիճակի մասին:

4.3 Եկամուտների կառուցվածքում միտումնավոր բաց է թողնված ամենամեծ տեսակարար կշիռն ունեցող «եկամտի աղբյուրը», որը նշել է ընտանիքների 23%-ը՝ դրանք սեփականության, գույքի և թանկարժեք իրերի վաճառքից գոյացած գումարներն են, ընդ որում հանրապետության բնակչության մեկ շնչի հաշվով դրանք կազմել են 6781 դրամ, (քաղաքաբնակների համար 9716 դրամ, իսկ գյուղաբնակների համար՝ 2136 դրամ):

Վերջինս, մի շարք այլ հանգամանքներից գատ, պայմանավորված է նաև բանկային համակարգում (հատկապես Հայխնայբանկում) բնակչության ավանդների (փողային նախկին խնայողությունների) չափազանց զրոյականացման աստիճանին մոտ չափով արժեզրկմամբ:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ մեկ շնչի հաշվով «համախառն եկամուտները» (այսինքն՝ ընթացիկ եկամուտների և ունեցվածքի վաճառքից ստացված միջոցների ամսական գումարը) ըստ բնակչության դեցիլային խմբերի խիստ բևեռացված են (տես՝ աղյուսակ 9): Ընդ որում, զրոյական եկամուտ մատնանշած ընտանիքները հաշվարկից դուրս են թողնված:

Աղյուսակ 9. Մեկ շնչի հաշվով ստացված համախառն եկամուտների բաշխումն ըստ դեցիլային խմբերի

Դեցիլներ	Մեկ շնչի եկամուտներն առանց «0» եկամուտ ունեցող ընտանիքների (4662 ընտանիքների հաշվով)	
	ընթացիկ եկամուտները	համախառն եկամուտները
1	794	1243
2	1854	2601
3	2861	3867
4	3901	5263
5	5226	7020
6	6899	9378
7	9309	12545
8	12971	17020
9	19616	25244
10	56989	102242

4.4 Եկամուտների վերլուծությունն, ըստ եկամուտ ստացողների տնտեսական կարգավիճակի, իրականացվել է երկու եղանակով.

ա) կշռված միջինի հաշվակմամբ

բ) թվաքանական միջինի հաշվակմամբ

Ստացված արդյունքները զետեղված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10. Յուրաքանչյուր եկամուտ ստացողի միջին ամսական եկամուտն ըստ եկամտի աղբյուրի (դրամ/ամիս)

Եկամտի հիմնական աղբյուրները	Գրամ/ամիս	Գրամ/ամիս
	ա)	բ)
Վարձու աշխատանքից ստացված միջին զուտ եկամուտը (ներառյալ մասնավոր հատվածը)	10001.74	8521.71
Ինքնագրավածությունից ստացված միջին զուտ եկամուտը (ներառյալ գործատուներին)	30739.78	11910.94
Թոշակառուների միջին կենսաթոշակը	2955.36	2517.17
Գործազրկության միջին նպաստը	2154.07	700.17
Գյուղատնտեսական արտադրանքի վաճառքից ստացված միջին եկամուտը մեկ գյուղացիական տնտեսության հաշվով	44589.83	14629.21

ա) Միջինը հաշվարկված է տնտեսական տվյալ կարգավիճակն ունեցող և հետազոտված ամսում եկամուտ ստացողների համար

բ) Միջինը հաշվարկված է տվյալ տնտեսական կարգավիճակն ունեցողների ընդհանուր թվաքանակի հիման վրա՝ անկախ տվյալ ամսում եկամուտ ստանալու փաստից

5. Տնային տնտեսությունների ծախսերը

5.1 Բնակչության կենսամակարդակը գնահատելիս, և հատկապես բարիքների (ըստ բնակչության տարբեր շերտերի) բաշխվածության հավասարաչափության (արդարության) աստիճանը որոշելիս վիճակագրական վերլուծության միջազգային մոտեցումներն ավելի կողմնորոշված են դեպի տնային տնտեսությունների ծախսային, քան եկամտային մասի ընդունումը՝ որպես եզրահանգումների հիմք:

Ստորև ներկայացված վերլուծությունը ևս մեկ ապացույց է մնան մոտեցման հիմնավորվածության, ինչպես նաև վկայությունն է հանրապետության տնային տնտեսություններին բնորոշ «Եկամուտներ – ծախսեր» հարաբերակցության մի շարք առանձնահատկությունների առկայության:

5.2 Տնային տնտեսությունների ամսական համախառն ծախսերը, որոնք ներառում են բոլոր տիպի սպառողական և ձեռնարկատիրության հետ կապված ծախսերը, մեկ տնային տնտեսության հաշվով կազմել են 66978 դրամ, իսկ մեկ շնչի հաշվով՝ 18844 դրամ (տես աղյուսակ 11)

Աղյուսակ 11. Տնային տնտեսությունների համախառն ծախսերն ըստ ուղղությունների (դրամ/ամիս)

	Ծախսման ուղղությունները	Մեկ տնային տնտեսության հաշվով	Մեկ շնչի հաշվով
1.	Սպառողական ծախսեր, այդ թվում	62643	17658
1.1	Գնված սննդամթերք	27220	7670
1.2	Չգնված սննդամթերք	5392	1424
1.3	Ծխախոտ	1384	361
1.4	Արդյունաբերական ապրանքներ	10987	3156
1.5	Ծառայություններ	17660	5047
2.	Ձեռնարկատիրության հետ կապված ծախսեր, այդ թվում	4335	1186
2.1	Ընտանի կենդանիների վրա	1341	365
2.2	Հողի հետ կապված ծախսեր	2332	654
2.3	Բիզնեսի հետ կապված ծախսեր	662	167
	Ընդամենը համախառն ծախսեր	66978	18844

5.3 Տնային տնտեսությունների մանրամասնված ծախսերը ներկայացված են աղյուսակներ 12-14-ում: Ինչպես բնորոշ է ոչ հարուստ հասարակությանը, ՀՀ ընտանիքների սպառողական ծախսերը կազմում են համախառն ծախսերի գերակշռող մասը՝ 93.5%-ը: Սակայն ձեռնարկատիրությանն արդեն ուղղվում են ծախսերի 6.5 %:

Բնական է, որ բարձր դեցիլային խմբերում ձեռնարկատիրական ծախսերի տեսակարար կշիռն աճում է, հասնելով մինչև 9.5%-ի, չնայած որ այս գծով էլ, կարծում ենք կան որոշակի թաքուստներ (պատճառները նույն են, ինչ եկամուտների համար. բիզնեսը գրանցված չէ, հատկապես և դրա վրա կատարված ծախսերը նույնպես չեն հայտարարվում):

Աղյուսակ 12. Համախառն ծախսերն ըստ ուղղությունների, դեցիլային խմբերով
Մեկ շնչի հաշվով

Դեցիլային խմբեր	Ընդամենը համախառն ծախսեր	Սպառողական ծախսեր					Չեռնարկատիրության վրա կատարված ծախսեր
		Գնված սննդամթերք	Չգնված սննդամթերք	Ծխախոտ	Արդ. ապրանքներ	Ծառայություններ	
1	2563.68	1981	20.76	57.5	87.29	394.89	22.24
2	5086.17	3529	80.43	177.39	223.64	1022.24	53.47
3	6944.21	4441	257.47	269.18	383.57	1417.79	175.2
4	9071.28	5191	615.52	334.66	635.62	1772.69	521.79
5	11462.88	6192	951.05	297.32	886.68	2013.16	1122.67
6	14736.92	7300	1106.94	355.65	1321.16	2364.69	2288.48
7	17556.5	7626	1648.29	418.29	1827.63	3152.31	2883.98
8	23855.29	9416	2186.61	457.13	2962.68	4001.58	4831.29
9	35754.31	11782	3128.79	528.7	4650.57	7260.99	8403.26
10	92902.76	19244	4242.87	711.97	18583.36	27070.5	2305.02
Ընդամենը	18844.16	7670.2	1423.873	360.779	3156.22	5047.09	1186

Աղյուսակ 13. Սպառողական ծախսերն ըստ ուղղությունների, դեցիլային խմբերով
Մեկ շնչի հաշվով

Դեցիլային խմբեր	Ընդամենը սպառ. ծախսեր	Գնված սննդամթերք	Չգնված սննդամթերք	Ծխախոտ	Արդ. ապրանքներ	Ծառայություններ
1	2530.73 100	1981 78.278	23.81 0.941	54.52 2.154	86.65 3.424	384.75 15.203
2	5014.49 100	3529 70.376	83.9 1.673	173.81 3.466	223.45 4.456	1004.33 20.029
3	6707.59 100	4441 66.209	277.13 4.132	272.22 4.058	366.34 5.462	1350.9 20.140
4	8495.69 100	5191 61.102	608.28 7.160	321.58 3.785	634.6 7.470	1740.23 20.484
5	10274.7 100	6192 60.265	1075.85 10.471	323.03 3.144	754.98 7.348	1928.84 18.773
6	12593.58 100	7300 57.966	1163.79 9.241	339.51 2.696	1346.41 10691	2443.87 19.406
7	14791.07 100	7626 51.558	1830.99 12.379	428.64 2.898	1831.92 12.385	3073.52 20.780
8	18832.9 100	9416 49.998	2061.9 10.948	473.85 2.516	2745.38 14.578	4135.77 21.960
9	26975.1 100	11782 43.677	3164.68 11.732	524.79 1.945	4627.65 17.155	6875.98 25.490
10	70365.76 100	19244 27.3485	3948.4 5.6113	695.84 0.9889	18944.83 26.9234	27532.7 39.1280
Ընդամենը	17658.091 100	7670.13 43.4	1423.873 8.1	360.779 2.0	3156.221 17.9	5047.088 28.6

5.4 Միջին վիճակագրական տնային տնտեսությունը սպառողական ծախսերի 47.9%-ը (ներառյալ չգնված սննդամթերքի դրամական արժեքը) կատարում է ծառայությունների

(28.2%) և արդյունաբերական ապրանքների գնման (19.7%) համար: Այս կառուցվածքն արդեն իսկ հաշվի է առնվել փաստացի նվազագույն սպառողական զամբյուղի հաշվարկման կարգում:

Ինչ վերաբերվում է սննդամթերքի կազմին և կառուցվածքին, ապա ըստ աղյուսակ 14-ի տվյալների, ընտանիքների սպառման կառուցվածքում ամենամեծ բաժինն ունեն հացն ու հացամթերքը՝ բոլոր սպառողական ծախսերի 16.1%-ը և գնված սննդամթերքի վրա կատարված ծախսերի ավելի քան 37%-ը: Սա նույնպես վկայում է բնակչության ոչ բարձր կենսամակարդակի մասին:

Աղյուսակ 14. Սպառողական ծախսերի կազմն ու կառուցվածքը

	Ապրանքներ և ծառայություններ	Տնային տնտ-նի հաշվով		Մեկ շնչի հաշվով	
		Դրամ	%	Դրամ	%
1.	Գնված սննդամթերք	27220	434.54	7670	434.37
1.1.	Հաց և հացահատիկ	10103	161.29	2764	156.51
1.2.	Կաթնամթերք	1367	21.83	414	23.46
1.3.	Յուղեր և ճարպեր	2510	40.07	737	41.76
1.4.	Միս	3561	56.85	1007	57.00
1.5.	Չուկ	555	8.86	153	8.65
1.6.	Բանջարեղեն	982	15.68	277	15.70
1.7.	Սրգեր	972	15.52	268	15.17
1.8.	Կարտոֆիլ	1244	19.85	350	19.81
1.9.	Շաքար	1045	16.69	300	16.97
1.10.	Հրուշակեղեն	850	13.58	236	13.34
1.11.	Չու	632	10.10	191	10.80
1.12.	Սուրճ	1109	17.70	320	18.14
1.13.	Ոչ ալկոհոլային խմիչքներ	91	1.46	26	1.47
1.14.	Ալկոհոլային խմիչքներ	782	12.49	228	12.89
1.15.	Այլ սննդամթերք	184	2.93	50	2.82
1.16.	Սնունդ տնից դուրս	1231	19.66	351	19.88
2.	Չգնված սննդամթերք	5392	86.07	1424	80.64
2.1.	Հաց և հացահատիկ	1505	24.02	377	21.35
2.2.	Կաթնամթերք	1252	19.99	320	18.12
2.3.	Յուղեր և ճարպեր	168	2.69	46	2.58
2.4.	Միս	448	7.16	114	6.43
2.5.	Չուկ	1	0.02	0	0.03
2.6.	Բանջարեղեն	234	3.74	72	4.10
2.7.	Սրգեր	373	5.96	101	5.74
2.8.	Կարտոֆիլ	1164	18.58	326	18.47
2.9.	Չու	222	3.54	61	3.45
2.10.	Ալկոհոլային խմիչքներ	19	0.31	5	0.31
2.11.	Այլ սննդամթերք	4	0.07	1	0.06
3.	Ծխախոտ	1384	22.09	361	20.43
4.	Արդ. ապրանքներ	10987	175.39	3156	178.74
4.1.	Կտորեղեն	56	0.89	12	0.71
4.2.	Հագուստ	3216	51.34	874	49.50
4.3.	Կոշիկ	2706	43.20	710	40.23
4.4.	Կահույք և էլեկտրասարքեր	1102	17.59	275	15.59
4.5.	Տնային գործունեության առարկաներ	516	8.24	147	8.32
4.6.	Շինանյութեր և գոծիքներ	134	2.13	61	3.45
4.7.	Այգեգործական ապրանքներ	3	0.04	1	0.03
4.8.	Դեղորայք	1119	17.87	326	18.48
4.9.	Տրանսպորտային միջոցներ	1692	27.02	633	35.84
4.10.	Զարդեղեն	88	1.40	25	1.43
4.11.	Անձնապիտու ապրանքներ	58	0.92	19	1.09

ՄԱՍ 2.ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

4.12.	Գրքեր և գրենական պիտույքներ	297	4.74	72	4.07
5.	Ծառայություններ	17660	281.92	5047	285.82
5.1.	Կենցաղային ծառայություններ	270	4.30	74	4.21
5.2.	Բնակարանային-կոմունալ ծառ-եր	5935	94.74	1755	99.38
5.3.	Առողջապահության ծառ-եր	3537	56.47	927	52.51
5.4.	Տրանսպորտային ծառ-եր	2672	42.66	803	45.47
5.5.	Ազատ ժամանակի կազմակերպում	64	1.03	19	1.06
5.6.	Կրթություն	1892	30.20	448	25.37
5.7.	Տուրիստական-էքսկուրսիոն ծառ-եր	77	1.23	16	0.89
5.8.	Իրավական ծառ-եր	83	1.33	25	1.42
5.9.	Այլ ծառայություններ	3051	48.70	949	53.73
5.10.	Նավթի կտրոններ	78	1.25	32	1.79
	Ընդամենը ծախսեր	62643	1000	17658	1000